Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատի եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի միջեւ համագործակցության մասին

Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատը եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը (այսուհետ՝ Կողմեր)՝

- կարեւորելով Կիպրոսի եւ Հայաստանի ժողովուրդների միջեւ ավանդական բարեկամական հարաբերությունների հետագա զարգացումը եւ ամրապնդումը,

- ընդունելով երկու երկրների միջեւ միջխորհրդարանական համագործակցության կարեւորությունն ու արդիականությունը՝ բարեկամական եւ փոխշահավետ կապերի զարգացման համար,

- առաջնորդվելով միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներով եւ նորմերով,

- ձգտելով միջխորհրդարանական գործունեության իրավական եւ այլ բնագավառներում համագործակցության հետագա խորացմանը,

- ձգտելով երկու երկրների հետագա համագործակցությանը քաղաքական, առեւտրատնտեսական, գիտատեխնիկական եւ մշակութային բնագավառներում,

- հավաստելով իրենց հավատարմությունը պառլամենտարիզմին, որպես ինքնիշխան պետությունների ժողովրդավարական զարգացման հիմք,

- ղեկավարվելով Կողմերի իրավունքների եւ շահերի հարգման սկզբունքներով, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

1. Աջակցել Կիպրոսի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջխորհրդարանական համագործակցության զարգացմանը՝
քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ բնագավառներում հավասարազոր հարաբերությունների հետագա խորացման հիմքերի ստեղծման նպատակով:

2. Նպաստել համագործակցության մասին Համաձայնագրի զուգահեռ իրականացմանը, տեղեկատվության եւ փորձի փոխանակությանը խորհրդարանների օրենսդրական եւ այլ գործունեության վերաբերյալ:

3. Պարբերաբար տեղեկատվություն փոխանակել երկու խորհրդարանների ընթացիկ օրինաստեղծ գործունեության մասին, ակտիվացնել փոխգործակցությունը խորհրդարանական կոմիտեների եւ հանձնաժողովների միջեւ:

4. Իրականացնել համագործակցություն իրավական տեղեկատվության միջպետական համակարգի ստեղծման եւ կիրառման, խորհրդարանական ծառայությունների տեղեկատվության բազաների համատեղ նախապատրաստման գործընթացներում:

5. Նպաստել Կողմերի աշխատակազմերի միջեւ մշտական կապերի ստեղծմանը եւ կայուն համագործակցությանը:

6. Ստեղծել մշտապես գործող Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատի եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողով (այսուհետ՝ Միջխորհրդարանական հանձնաժողով)՝ կազմված Կողմերի ներկայացուցիչներից: Միջխորհրդարանական հանձնաժողովի գործունեությունը համակարգում են համանախագահները:

Միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահները եւ Կողմերի ներկայացուցիչները հաստատվում են Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ համաձայն նրանց ներքին կանոնների եւ ընթացակարգերի:

ա. Միջխորհրդարանական հանձնաժողովը նպաստում է Կիպրոսի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության երկկողմ միջպետական հարաբերությունների զարգացմանը, կապերին, խորհրդատվություններին եւ տեղեկատվության փոխանակմանը համագործակցության բոլոր բնագավառներում, ինչպես նաեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների շուրջ Կողմերի դիրքորոշումների համաձայնեցմանը:

բ. Միջխորհրդարանական հանձնաժողովը Կողմերի միջխորհրդարանական հարաբերությունների վերլուծության եւ նրանց հետագա ընդլայնման հեռանկարների հիման վրա նպաստում է ազգային օրենսդրությունների համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում տեղեկատվության փոխանակմանը, երկու երկրների խորհրդարանների եւ նրանց մարմինների համար երկուստեք հետաքրքրություն ներկայացնող առաջարկությունների եւ հանձնարարականների նախապատրաստմանը:

7. Փոխադարձ պայմանավորվածության համաձայն Կողմերը կարող են սույն Համաձայնագրում մտցնել փոփոխություններ եւ լրացումներ:

8. Սույն Համաձայնագրի կիրառման կամ բացատրության վերաբերյալ տարաձայնությունները լուծվում են Կողմերի համաձայնությամբ՝ բանակցությունների, փոխադարձ ընթացակարգերի կամ այլ միջոցներով:

9. Հանդիպումների անցկացման ժամկետները, ինչպես նաեւ նրանց մակարդակը եւ քննարկմանը ներկայացվող հարցերը որոշվում են նախապես՝ հատուկ արձանագրությամբ:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Ցանկացած Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ մյուս Կողմին Համաձայնագրի գործողության դադարեցման ենթադրվող օրվանից վեց ամիս առաջ գրավոր ծանուցելով իր մտադրության մասին:

Կատարված է Նիկոզիա քաղաքում, 2003 թվականի դեկտեմբերի 9-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն եւ հունարեն, ընդ որում, երկու տեքստերը համազոր են:

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՆՈՒՆԻՑ	**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՆՈՒՆԻՑ**
ՆԱԽԱԳԱՀ Դ. ՔՐԻՍՏՈՖԻԱՍ	**ՆԱԽԱԳԱՀ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**